Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Ջրաբերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ) թափուր տեղի համար։

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումը անցկացվում է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի։

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1),

2) Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3) Անձնագրի պատճենը,

4) Ինքնակենսագրություն (Ձև4),

5) Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6) Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ։

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև ***նոյեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից մինչև 14^{00}-ը****, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։*

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի։

Մրցույթը տեցի կունենա ***նոյեմբերի 25-ին՝ ժամը 13^{00}-ին****, Կոտայքի մարզի Ջրաբերի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գյուղ Ջրաբեր, 1 –ին փողոց, շենք 24։*

Տեղեկությունների համար զանգահարել *(093) 77-00-10* հեռախոսահամարով։